

աստիճանի արժէքաւոր են մեզ համար եւ արժանի յատուկ ուշադրութեան: Դրանց արժէքը բարձրանում է մասնաւորապէս այն պատճառով, որ — Հաքստհաուզէնի աշխատութեան նման — կարեւոր տեղեկութիւններ են հաղորդում մեզ արեւելահայ դրականութեան հայր Խաչատուր Աբովեանի անձնաւորութեան եւ դերի մասին, որով եւ այդ տեսակէտից էլ դառնում են առաջնակարգ օտար աղբիւր:

Բողենշտէլտ մեզ Աբովեանի մասին շատ աւելի բան է հաղորդում, քան Հաքստհաուզէն: Ինչպէս վերջինս, այնպէս եւ դերման ուրիշ ճամբորդներ, դրանց թւում նաեւ Բողենշտէլտ — այդ բանը խոստովանում է նա ինքը — շատ բան են պարտական Աբովեանին՝ Հայաստանի եւ հայ ժողովուրդի մասին ձեռք բերած իրենց ծանօթութիւնների համար, որոնք եւ կազմել են նրանց գիտական աշխատութիւնների ատաղձը:

Այժմ անցնենք բուն նիւթին, նախ առաջ բերելով այն բոլոր տեղեկութիւնները, որ Բողենշտէլտ մեզ հաղորդում է Խ. Աբովեանի մասին: Դրանցից շատերը բոլորովին Ընդ գծեր են աւելացնում Աբովեանի կենսագրութեան վրայ: Միւսներն էլ, շատ նորութիւններ չպարունակելով մէկտեղ, լրացնում են եղած աղբիւրները, որով դրանք եւս պահում են իրենց արժէքը:

* * *

Խաչատուր Աբովեանի մասին Բողենշտէլտ բազմաթիւ անգամներ յիշատակութիւն է անում իր վերոյիշեալ աշխատութիւնների մէջ: Երկու անգամ, մէկ «Հաղար ու մէկ օր Արեւելքում» աշխատութեան մէջ (Ա. 159-167) եւ մէկ էլ իր «Յուշեր»ում (Ա. 297-9) նա առանձին հատուածներ է նուիրում Աբովեանին¹⁾:

Վերջինիս հետ Բողենշտէլտ ծանօթացել է Երեսան հասնելուն պէս:

«Երբ մենք հիւրընկալի տանը արդէն նախաճաշել ու կազդուրուել էինք, — գրում է Բո-

ղենշտէլտ, — այցելութիւն տուինք²⁾ Աբովեանին, Պարրոտի ծանօթ ուղեկցին՝ Արարատ սարը բարձրանալիս: Աբովեանը մի տաղանդաւոր հայ է, որ Դորպատում բարձրագոյն կրթութիւն է առել եւ հետը հայրենիք բերել գերմաներէն ու Ֆրանսերէն լեզուների հիմնաւոր ծանօթութիւն: Այդտեղ, իր հայրենիքում, նա զարմանալի անձնուկրութեամբ դործում է իր հայրենակիցների լուսաւորութեան օգտին: Նա շարունակ իր մօտ հաւաքած ունի քսանից մինչեւ երեսուն երեխաներ, որոնց հետ նա մեծ մասով գերմաներէն է խօսում: Նրա աշակերտները իսկապէս որ այնչափ լաւ յառաջադիմութիւն էին արել (գերմաներէնում), որ մենք նրանց հետ բոլորովին սահուն կերպով զրուցել կարող էինք մեր մայրենի լեզուով» («Հաղար ու մի օր Արեւելքում», Ա. 155): Նոյն աշխատութեան մէջ մի ուրիշ տեղ (էջ 173) Բողենշտէլտ այդ մասին հետեւեալն է ասում, երբ նա իր տպաւորութիւններն է հաղորդում երեւանցիների մասին. —

«Մեծ գոհունակութիւն պատճառեց նրանց այն, երբ մեր բերնից գովասանքներ լսեցին իրենց երեխաների ուսուցչի հասցէին. առաւել եւս ուրախացան նրանք լսելով, թէ ինչպէս նրանք, այդ պատանիները իրենք, մեզ հետ բոլորովին սահուն կերպով գերմաներէն էին խօսում»:

Բողենշտէլտ շարունակում է. «Աբովեան սիրալի կերպով յանձն առաւ առաջնորդել մեզ մեր քաղաքավարական բոլոր այցելութիւններու միջոցին, որ եւ կատարեցինք շտապ կերպով» («Հաղար ու մի օր Արեւելքում», Ա. 155):

Ինչպէս Հաքստհաուզէնին, Բողենշտէլտին ու Ռոզէնին եւս ուղեկցել է Աբովեան՝ էջմիածին կատարած նրանց այցելութեան միջոցին:

Այդ մասին Բողենշտէլտի մօտ գտնում ենք որոշ յիշատակութիւն իր «Հաղար ու մի օր Արեւելքում» աշխատութեան Բ. հատորի 9-րդ գլխում, «Աբովեան» խորագրով (էջ 162),

1) Բ. մեծ մասով Ա-ի անունը գերմաներէն տառադարձում է Obowian եւ քիչ անգամ մի այն՝ Abowian:

2) Բ. յոգնակի ձեւով է խօսում, որովհետեւ մինակ չէր ճամբորդել Հայաստան, այլ մի ուրիշ գիտնականի՝ Ֆոն Ռոզէնի հետ միասին: